

**ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ
ՆԱՐԻՆԵ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ**

Բանասիրական գիտությունների թեկնածու

*ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղի «Հումանիտար
առարկաներ և տնտեսագիտություն» ամբիոնի ասիստենտ*

Բանալի բառեր՝ *Քաղաքակրթության փակ սկզբունքներ, մասնագիտական լեզու, պետական լեզու, ազգային լեզու, լեզվամտածողություն, ազգային հոգեկերտվածք, լատինատառ հայերեն:*

Ներածություն: Ավ. Իսահակյանի «Մեր լեզուն մեր հայրենիքն է» ասույթը արդիական է բոլոր ժամանակներում: Մարդու լեզվամտածողությունը ձևավորվում է ազգային հողի վրա և փոխանցվում սերնդեսերունդ: Պետականության և անկախ Հայաստանի պայմաններում մեսրոպատառ, ոսկեդենիկ հայերենը պարտավոր ենք պահպանել ու կատարելագործել: Մենք՝ որպես ազգ, կարող ենք զարգանալ, եթե մտածենք քաղաքական անկախության մասին: Յուրաքանչյուր քաղաքակրթության կեցության սկզբունքները փակ են և մյուս ժողովուրդներին անհասկանալի: Ուստի պարտադիր չէ, շատ դեպքերում էլ՝ ցանկալի չէ, որ գիտության նվաճումները բացեիքաց մատուցվեն օտարներին: Կա և հակառակ երևույթը. օտարի համար անհասկանալի և անընդունելի է մեր հոգեբանությունը կամ բնավ հետաքրքրություն չունի մեր գրականության ու լեզվի հանդեպ: Այսպես՝ Ամենայն հայոց բանաստեղծ Թումանյանը, որ մեր լեզվի զարգացման գործում մեծ ներդրում ունի, զուտ ազգային հեղինակ է: Սրանից մենք բարդույթավորվելու իրավունք չունենք, և ոչ էլ մեր մեծագույն հանճարն է նսեմանում:

Հիմնական մաս: Հայրենիքի համար օրհասական իրավիճակում հայը միշտ էլ ճիշտ է կողմնորոշվել և որդեգրել է մշակույթների կամրջման քաղաքականություն՝ պահպանելով ազգայինը: Այդ կերպ են կողմնորոշվել Մեսրոպ Մաշտոցը և հաջորդները: Մաշտոցը «սեփական ձայնով և ոչ թե մուրացած լեզվով» [3, էջ 31] էր ուզում ներկայանալ աշխարհին և լավ էր հասկանում, որ միայն այդպիսի ռազմավարությամբ ենք կարողանալու պահպանվել որպես ազգ: Մաշտոցյան պատգամը արդիական է առ այսօր. սեփական ձայնով և ոչ թե մուրացած լեզվով պետք է ներկայանանք աշխարհին:

Ասվածը վերաբերում է հատկապես գիտության լեզվին: Գիտության լեզուն է և պարտավոր է լինել հայերենը, քանի որ այն մեր պետական լեզուն է և ամրագրված է Սահմանադրությամբ [Տե՛ս այստեղ՝ <https://www.arlis.am/hy/acts/102510>]: Պետության պարտքն է խթանել մշակույթի, կրթության, հայոց լեզվի և մշակութային ժառանգության պաշտպանությունը և հոգալ նրա զարգացման համար [Տե՛ս այստեղ՝ <https://www.arlis.am/hy/acts/102510>], ինչպես մայր հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում [Տե՛ս այստեղ՝ <https://www.arlis.am/hy/acts/102510>]: Յուրաքանչյուր անկախ պետության համար մայրենի լեզուն ինքնության գրավականն է:

Խորհրդային ժամանակաշրջանում հայոց լեզուն պարտադիր էր որպես ընդունելության քննության առարկա, ինչը շարունակվեց նաև անկախության շրջանում: Սակայն վերջին տարիներին բուհերի ընդունելության ցանկից հանվեց հայոց լեզվի քննությունը կամ դարձավ կամընտրական, ինչը խորապես անդրադարձավ նոր սերնդի գրագիտության և ազգային գիտակցության վրա: Նույնը վերաբերում է 9-րդ դասարանի հայոց լեզվի (նաև մաթեմատիկայի) ավարտական քննության միասնական հանձնելու կարգի դադարեցմանը. պետական անփույթ վերաբերմունքի պատճառով նոր սերունդը անտարբերություն, երբեմն նույնիսկ ատելություն ունի մայրենիի հանդեպ:

Անկախության հռչակագրից հետո հայոց լեզվի դասընթացը պարտադիր դարձավ բուհերում: Ժամանակի ընթացքում այն ավելի հստակեցվեց՝ հարմարվելով մասնագիտական լեզվին: Այժմ բոլոր քոլեջների երկրորդ կուրսում ու բուհերում դասավանդվում է մասնագիտական լեզու՝ «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» առարկան: Օրինակ՝ ՀԱՊՀ պոլիտեխնիկական համալսարանում դասավանդվում է «Գործնական և գիտական հայոց լեզու» առարկան: Յավոք, վերջին տարիների փոփոխությունների արդյունքում բախվում ենք այն խնդրին, որ անգլերենից միասնական քննություն հանձնաժ ուսանողը մայրենիից չունի նվազագույն գիտելիքներ: Օտար լեզվի իմացությունը չպետք է լինի հայոց լեզվի հաշվին: Հաճախ մասնագիտական գրականություն չլինելու պատճառով է, որ ուսանողը ստիպված է ընթերցելու այլալեզու գրականություն, ուստի անհրաժեշտ են մասնագիտական գրականության բարձրորակ թարգմանություններ:

Այսօր մեզ անհրաժեշտ է վերածննդի գաղափարախոսություն: Դրանով են առաջնորդվել մեր նախնիները հատկապես գրերի գյուտից հետո, դրանով են առաջնորդվել Մխիթարյան հայրերը: Պատահական չէ, որ Նապոլեոնի 1810 թ. սեպտեմբերի 8-ի հրամանով Մխիթարյան միաբանությունը ճանաչվել է անձեռնմխելի, իսկ նրա մեկ այլ հրամանով Փարիզում բացվել է հայոց լեզվի ուսուցման բաժանմունք՝ 26 ուսանողով¹: Աշխարհի տարբեր անկյուններում առ այսօր գործում են հայագիտական կենտրոններ, որտեղ հայագիտությամբ են զբաղվում ոչ միայն հայերը, այլև օտարները:

Հայերենը աշխարհի հնագույն լեզուներից է, և նրա հանդեպ հետաքրքրությունը չի նվազում: Մենք իրավունք չունենք մեր իսկ հայրենիքում մեզնից օտարելու մայրենին. այն պիտի զարգանա գեղարվեստական և գիտական գրականության միջոցով: Համաժողովրդական լեզվի բարձր առանձնահատկությունները պիտի արտացոլվեն միայն այդպես: Ժամանակին այդպես է վարվել Վահան Տերյանը՝ հրաժարվելով ռուսերեն գրելուց՝ չնայած փայլուն տիրապետելուն: Այդպես են վարվել նաև Սփուռքում, և եթե այսօր դեռևս կենդանի է գրական արևմտահայերենը, այդ ջանքերի ու նվիրումի շնորհիվ է:

¹ Այստեղ են սովորել օտարազգի նշանավոր հայագետներ՝ Ֆ. Նոյման, Հ. Պետերման, Վ. Լանգլուա, Հ. Հյուբշման, Ն.Մառ, Ա. Մեյե և այլք:

Տարբեր ժամանակներում մեր լեզուն ենթարկվել է տարատեսակ փորձությունների: Այսպես՝ Խորհրդային Միության բազմալեզու ժողովուրդներից սոցիալիստական ազգ կերտելու նպատակով անհրաժեշտ էր կտրել հիշողության լարը՝ մոռացության մատնել անցյալը, հեռացնել գրավոր ավանդույթներից և մարդկանց միտքը ողողել հեղափոխության անհայրենիք գաղափարներով: Դրա համար կատարվեցին ուղղագրական բարեփոխումներ, ինչից դժգոհ էին ժամանակի առաջադեմ հայ մտավորականները, այդ թվում՝ Չարենցը, և ինչին առ այսօր չեն համակերպվում Սփյուռքում: Այնուհետև որոշեցին անցնել լատինատառ հայերենին²: «Դա կլիներ հոգևոր եղեռն և արևմտահայության ֆիզիկական բնաջնջումից հետո վերջնական կործանման կդատապարտեր ժողովրդին» [1, 47]: Մեր լեզվի համար հաջորդ փորձությունը 1977 թ. բրեժնևյան սահմանադրությունն էր, որ իսկական սպառնալիք էր հայոց պետական լեզվին: Սակայն դեռևս քննարկման փուլում, Հայաստանի և մյուս միութենական հանրապետությունների մտավորականության դժգոհության ու բողոքի ալիքը կասեցրեց այդ վտանգը:

Անկախ պետության պայմաններում մենք ավելի զգոն պիտի լինենք՝ չհանդուրժելով հայոց լեզվի դեմ ոչ մի ոտնձգություն: Պիտի ուշադրություն դարձնենք մեր կյանքի ամեն մի մանրամասնություններին՝ գովազդային վահանակներ, ապրանքանիշներ, վերապատրաստումներ, զանազան վկայականներ: Պիտի խստորեն պահանջել, որ ոչ միայն գիտության լեզուն, այլև մեր կենցաղի ամեն մի բաղադրիչ լինի հայերեն ու վերահսկվի հասարակության ամեն բնագավառ:

«Լեզուն արին է՝ խառնաձ հոգիով պեղաձ հողերին» [2, էջ 463], - ասում էր Կոստան Զարյանը, և լեզվից հեռացումը կամ գիտության բնագավառում օտար լեզվով և միջազգային պարբերականներում հրատարակած հոդվածներին առաջնություն տալը լրջագույն սպառնալիք է մեր լեզվին, լեզվամտածողությանը և ազգային հոգեկերտվածքին: Ցավալի է, որ Հայաստանում տպագրվող գիտական հանդեսներում անգամ առաջնությունը տալիս են օտար լեզվով գրված հոդվածներին: Սա մեղանչում է մեր լեզվի դեմ, և մայրենին մղվում է հետին պլան:

Օտար պարբերականներում հնարավոր է, որ մեր նշանավոր գրողների, ցեղասպանության կամ Արցախյան պատերազմի մասին գրված հոդվածները մերժեն: Իսկ Հայաստանում փակվելու են հայագիտական հանդեսները կամ այնտեղ բարձրորակ հոդվածներ չեն տպագրվելու: Անտեսվելու է մտավորականների տարիների վաստակը: Չէ՞ որ լավագույն հայագիտական գրքերը գրվել ու տպագրվել են հայերեն: Բացի դրանից առաջանալու է ֆինանսական ծանր բեռ, որը հայ գիտնականին զրկելու է գիտության մեջ խորամուխ լինելուց: Այս դեպքում հայոց լեզուն օտարվում է հենց հայրենիքում՝ պետականություն ունեցող անկախ երկրում: Սա նաև սպառնալիք է մեր ազգային անվտանգությանը:

²Ցավոք, այժմ էլ հաղորդագրություններ գրելիս հաճախ են գրում լատինատառ, որը ևս պետք է հսկվի: Ասվածը թեև կենցաղում է, սակայն սա ևս ազգային հոգեբանությունից և լեզվամտածողությունից հեռացում է, ուստի վերահսկողությունը ավելի դժվար է:

Եզրակացություն: Հայերենը պետք է լինի բարձր գիտության լեզու, և խոսքի մշակները՝ գրողները, գիտնականները, պիտի զարգացնեն, մշակեն ու կատարելագործեն հայոց լեզուն: Չմերժելով օտար լեզուների իմացությունը՝ պարտադիր ենք համարում գիտության լեզվում առաջնությունը տալ հայերենին, քանի որ մայրենին պիտի լինի բարձր գիտության լեզու, և չմնա կենցաղային մակարդակում: Բացի դրանից կան մասնագիտական նեղ կամ փակ ոլորտներ, որոնց զարգացումը պետք է կատարվի միայն հայերեն: Ուստի՝

- անհրաժեշտ է բարձրացնել հայոց լեզվի դերը՝ ավելացնելով Լեզվի կոմիտեի գործառույթները,
- տուգանք սահմանել կամ իսպառ վերացնել ցուցատախտակների օտար գրությունները, հատկապես, եթե չկա հայերեն որևէ գրառում,
- դադարեցնել վերապատրաստող այն կազմակերպությունների գործունեությունը, որոնց կողմից տրված վկայականները բացառապես օտար լեզվով են, և դրանց շնորհումը համարել անվավեր,
- վերականգնել հայոց լեզվի ընդունելության քննությունները բուհերում, իսկ բանասիրական բաժնում՝ բանավոր քննությունը,
- վերականգնել հայոց լեզվի հեղինակությունը և աշխատանքի ընդունելիս նախևառաջ պահանջել մայրենիի գերազանց իմացություն:

Ամփոփոգիր

Հոդվածում ներկայացրել ենք հայոց լեզվի կարևորությունը գիտության բնագավառում, քանի որ այն մեր մայրենին է, ազգային ու պետական լեզուն, որ ամրագրված է Սահմանադրությամբ: Գիտության լեզուն առաջին հերթին պետք է լինի հայերենը, մանավանդ, որ ամբողջ աշխարհում կան հայագիտական կենտրոններ, որոնք աշխարհին տվել են նշանավոր հայագետներ: Ընդհանուր անդրադարձ ենք կատարել Մաշտոցից մինչև խորհրդային և անկախության շրջանի ռազմավարությանը և հանգել ենք նրան, որ գիտության լեզուն պարտադիր պետք է լինի հայերենը:

Значение армянского языка в сфере науки

Ключевые слова: Скрытые принципы цивилизации, профессиональный язык, государственный язык, национальный язык, языковое мышление, национальная психология, латинская графика армянского языка.

В статье мы представили важность армянского языка в сфере науки, так как это наш родной язык, наш национальный и государственный язык, что закреплено в конституции. Языком науки должен быть прежде всего армянский язык, тем более, что во всем мире есть центры арменоведения, давшие миру выдающихся армено-ведов. Мы сделали общую ссылку на стратегию, начиная от Маштоца до советского периода, и периода независимости и пришли к выводу, что языком науки обязательно должен быть армянский.

The importance of the Armenian language in the field of science

Keywords: core principles of civilization, professional language, state language, national language, linguistic thinking, national psyche, Latin-script Armenian.

In the article we presented the importance of the Armenian language in the field of science as it is our native language, the national and state language, which is enshrined in the Constitution. The language of science should, first and foremost, be Armenian, especially considering the fact that there are Armenian studies centers all around the world that have given the world prominent Armenologists. We made a general reference to the strategy from the time of Mashtots to the Soviet and independence periods and we have come to the conclusion that the language of science must be Armenian.

Օգտագործված գրականության ցանկ

1. Գասպարյան Դ., 1994, Փակ դռների գաղտնիքը (Զարեհնցը, Բակունցը և մյուսները), Երևան:
2. Զարեան Կ., 1999, Նավատոմար, Երևան:
3. Փարպեցի Ղ., 1982, Հայոց պատմություն; Թուղթ Վահան Մամիկոնյանին, Երևան:

Համացանցային աղբյուրներ

ՀՀ Սահմանադրություն, 27.05.2025

<https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>